ԳՈՐԾԱՐԱՐ ԾՐԱԳԻՐ

«ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՇԱԽՄԱՏԻ ՖԵԴԵՐԱՑԻԱՅԻ»

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ 10 ԱՄՅԱ

ԵՂԵԳՆԱՁՈՐ 2017

Ի. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

«22 մայիսի 2013թ.» Վայոց ձորի մարզի

կազմակերպությունը ստեղծվել է (վերակազմակերպվել է) «Շախմատի ֆեդերացիա հասարակական կազմակերպության հիմնադիր ժողովի կողմից» :

Կազմակերպության գրանցման վկայականի համարն է 03Ա- 925099:

1.1. Կազմակերպության նպատակները և խնդիրները

«Վայոց ձորի մարզային շախմատի ֆեդերացիայի » նպատակներն են.

1. Մարզում շախմատի մասսայականացման և զարգացման ապահովում

2. Շախմատ ուսումնասիրել ցանկացողների աճը

3. Շախմատի խմբակների և շենքային պայմանների բարելավումը, և այլն:

Շախմատի մարզային ֆեդերացիայի խնդիրներն են.

1. Շախմատի խմբակների բացում տարբեր տարիքային խմբերի համար,

2. Պարբերաբար շախմատի մրցաշարերի անցկացումը տարբեր տարիքային հասակի համար և այլն:

1.2. Կազմակերպության գործունեության իրավական հիմքերը

Վայոց ձորի մարզի շախմատի ֆեդերացիան իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, «Հասարակական կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, «22 » մայիսի 2013թ. ընդունված կազմակերպության կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով:

«Մարզային ֆեդերացիայի» կազմակերպության աշխատողների միջև հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

1.3 Կազմակերպությունում առկա մարդկային ռեսուրսներն են.

1. Դպրոցահասակ երեխաների ընդգրկվածությունը կազմում է շուրջ 195 երեխա,
2. Մեծահասակների ընդգրկվածությունը կազմում է 60 հոգի,
3. _____ և այլն:

1.4. Կազմակերպության գործունեության ոլորտը

Վայոց ձորի մարզային ֆեդերացիայի գործունեության ոլորտներն են

1. ՀՀ Շախմատի ակադեմիայի Վայոց ձորի մասնաճյուղերի գործունեության,

ապահովում

2. Շախմատի տարբեր տարիքային խմբերում աշխատանք

3. _____ և այլն:

II. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

2.1. Ծրագրի նպատակը

Սույն ծրագրի իրականացման համար հիմք է հանդիսացել

1. Նպաստել դպրոցականների և մեծահասակների շրջանում շախմատ մարզաձևի զարգացմանը, լայն թափ հաղորդել նրա մասսայականացմանը:
2. Շախմատ մարզաձևը նպատակաուղղել սովորողների բարոյաֆիզիկական և հոգևոր հատկանիշների դաստիարակմանը:
3. Ի հայտ բերել շնորհալի մարզիկներին:

2.1. Ծրագրի իրականացման համար ֆինանսական աղբյուրները

Սույն ծրագրի շրջանակներում առաջիկա 10 տարում կազմակերպության գործունեության կազմակերպման համար ֆինանսական աղբյուրներ են հանդիսանում.

1. ՀՀ Շախմատի ակադեմիա,
2. Շախմատի մարզային ֆեդերացիա,
3. Անհատ հովանավորողներ,
4. Հասարակական կազմակերպություններ:

2.2. Ծրագրի իրականացման ժամկետները 10 տարի

2.3. Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ միջոցառումները

Սույն ծրագրի շրջանակներում առաջիկա 10 տարում Վայոց ձորի մարզի Շախմատի ֆեդերացիան նախատեսում է իրականացնել հետևյալ միջոցառումներ

1. Դպրոցահասակների մարզային օլիմպիադայի կազմակերպում,
2. Մարզի Շախմատի ամենամյա առաջնություն դպրոցահասակների և մեծահասակների միջև 3 փուլով
3. Մարզի պատմամշակութային համալիրներում /Սուրբ խաչ, Սպիտակավոր, Նորավանք, Մարտիրոսի Վիմափոր եկեղեցի/ տարբեր տարիքային խմբերի շախմատի մրցաշարերի անցկացում հովանավորների ֆինանսավորմամբ:
4. Մարզի շախմատի երախտավորների հուշամրցաշարերի անցկացում Արենիի Գինուտոնին կազմակերպվող շախմատի մրցաշար և այլն:

2.4. Ծրագրի իրականացման ակնկալվող արդյունքը

Սույն ծրագրի միջոցառումների իրականացման արդյունքում ակնկալվում է Շախմատի մարզային ֆեդերացիայի և ՀՀ Շախմատի ակադեմիայի համատեղ աշխատանքի արդյունքում կարգային շախմատիստների պատրաստում: Հայաստանի և միջազգային մրցաշարերում մեր մարզիկների մասնակցության ապահովում:

Տնօրեն Հ. ՍԱՐԳՍՅԱՆ